

Գլխավոր տեղեկություն

Номер	N 195-Ա		
Տիպ	Որոշում		
Тип	Инкорпорация (19.02.2022-по сей день)		
Статус	Գործում է		
Первоисточник	Հրապարակվել է միասնական կայքում		
Принят	ՀՀ կառավարություն		
Дата принятия	17.02.2022		
Подписан	ՀՀ վարչապետ		
Дата подписания	18.02.2022		
Дата вступления в силу	19.02.2022		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2022 թվականի N 195-Ա

«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԵՐՄՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԷՂՈՒԱՐԴ ՕՀԱՆՅԱՆԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՃԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԶԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հավանություն տալ Էդուարդ Օհանյանի կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում «Արդյունաբերական ջերմոցային համալիր»-ի կառուցման ներդրումային ծրագրին՝ համաձայն N 3 հավելվածի: N 3 հավելվածով սահմանված «ԳՐԻՆ ՍՈԼՈՒՇՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը Էդուարդ Օհանյանի կողմից սույն որոշմամբ ստանձնած պարտավորությունների համար համապարտ պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության կառավարության առջև:

2. Համաձայնություն տալ առաջարկությանը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի սեփականությունը հանդիսացող 51.41468 հա հողամասը՝ համաձայն N 1 հավելվածի, կադաստրային արժեքով Էդուարդ Օհանյանին ուղղակի վաճառքի ձևով օտարման վերաբերյալ՝ ներդրումային ծրագրի իրականացման նպատակով:

3. Հաստատել ներդրումային ծրագրի շրջանակներում հողամասի ուղղակի վաճառքի ձևով օտարման գործարքի հիմնական պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված հողամասը Էդուարդ Օհանյանի կողմից՝ համաձայն N 3 հավելվածի, մասնավոր սեփականատերերից իրացման գործընթացն ավարտելուց հետո՝ 5 տարվա ընթացքում

Նպատակային նշանակությամբ չօգտագործվելու դեպքում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին սահմանված կարգով ներկայացնել սույն որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ՝ նախապես Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավարին առաջարկելով լուծել ներդրումային ծրագիր իրականացնող ընկերության հետ կնքված պայմանագիրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ն. Փաշինյան

Երևան

18.02.2022
ՀԱՎԱՍՏԱՎՈՐ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱԶԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
փետրվարի 17-ի N 195-Ա որոշման

**«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԵՐՍՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ, ԷՂՈՒՐՈՂ ՕՋԱՆՅԱՆԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՃԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ
ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌԻ ԶԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**


ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայր

ՀՀ	Ծածկագիրը	Մակերեսը հա	1 հա արժեքը	Կադաստրային արժեքը	Գործառնական նշանակությունը
1.	05-040-0203-0055	2.67636	537,500.00	1,438,544	Արոտ
2.	05-040-0201-0027	0.24854	107,500.00	26,718	Գյուղ.այլ
3.	05-040-0201-0025	1.35084	107,500.00	145,215	Գյուղ.այլ
4.	05-040-0201-0026	0.29775	107,500.00	32,008	Գյուղ.այլ
5.	05-040-0219-0008	0.05253	107,500.00	5,647	Գյուղ.այլ
6.	05-040-0201-0028	1.29838	107,500.00	139,576	Գյուղ.այլ
7.	05-040-0201-0039	7.19547	537,500.00	3,867,565	Արոտ
8.	05-040-0222-0024	1.46727	537,500.00	788,658	Արոտ
9.	05-040-0221-0024	5.84479	537,500.00	3,141,575	Արոտ
10.	05-040-0223-0049	1.20944	537,500.00	650,074	Արոտ
11.	05-040-0223-0046	0.080229	537,500.00	43,123	Արոտ
12.	05-040-0222-0018	2.13382	537,500.00	1,146,928	Արոտ
13.	05-040-0203-0053	4.51845	537,500.00	2,428,667	Արոտ
14.	05-040-0223-0048	0.24266	537,500.00	130,430	Արոտ
15.	05-040-0223-0047	0.023494	537,500.00	12,628	Արոտ
16.	05-040-0202-0055	7.618	537,500.00	4,094,675	Արոտ
17.	05-040-0222-0023	0.93149	537,500.00	500,676	Արոտ
18.	05-040-0221-0025	0.097332	107,500.00	10,463	Գյուղ.այլ
19.	05-040-0202-0063	0.024269	107,500.00	2,609	Գյուղ.այլ

20.	05-040-0202-0061	0.073504	107,500.00	7,902	Գյուղ.այլ
21.	05-040-0203-0058	0.04307	107,500.00	4,630	Գյուղ.այլ
22.	05-040-0203-0054	0.16825	107,500.00	18,087	Գյուղ.այլ
23.	05-040-0203-0061	0.11501	107,500.00	12,364	Գյուղ.այլ
24.	05-040-0202-0057	0.17866	107,500.00	19,206	Գյուղ.այլ
25.	05-040-0202-0058	0.037185	107,500.00	3,997	Գյուղ.այլ
26.	05-040-0203-0059	0.07004	107,500.00	7,529	Գյուղ.այլ
27.	05-040-0202-0056	0.088311	107,500.00	9,493	Գյուղ.այլ
28.	05-040-0221-0026	0.024608	107,500.00	2,645	Գյուղ.այլ
29.	05-040-0203-0063	0.074692	107,500.00	8,029	Գյուղ.այլ
30.	05-040-0221-0023	0.070026	107,500.00	7,528	Գյուղ.այլ
31.	05-040-0202-0060	0.370189	107,500.00	39,795	Գյուղ.այլ
32.	05-040-0203-0065	1.38113	537,500.00	742,357	Արոտ
33.	05-040-0222-0019	0.018263	107,500.00	1,963	Գյուղ.այլ
34.	05-040-0203-0060	0.084812	107,500.00	9,117	Գյուղ.այլ
35.	05-040-0203-0064	0.007932	107,500.00	853	Գյուղ.այլ
36.	05-040-0203-0056	0.22568	107,500.00	24,261	Գյուղ.այլ
37.	05-040-0223-0026	0.04719	107,500.00	5,073	Գյուղ.այլ
38.	05-040-0414-0001	2.20353	107,500.00	236,879	Գյուղ.այլ
39.	05-040-0221-0027	0.29489	107,500.00	31,701	Գյուղ.այլ
40.	05-040-0202-0059	0.038176	107,500.00	4,104	Գյուղ.այլ
41.	05-040-0221-0029	0.011579	107,500.00	1,245	Գյուղ.այլ
42.	05-040-0203-0062	0.038572	107,500.00	4,146	Գյուղ.այլ
43.	05-040-0202-0062	0.025304	107,500.00	2,720	Գյուղ.այլ
44.	05-040-0222-0014	0.08228	635,000.00	52,248	Վարելահող
45.	05-040-0222-0015	0.11386	635,000.00	72,301	Վարելահող
46.	05-040-0222-0011	0.1768	635,000.00	112,268	Վարելահող
47.	05-040-0222-0016	0.28466	635,000.00	180,759	Վարելահող
48.	05-040-0222-0010	0.33932	635,000.00	215,468	Վարելահող
49.	05-040-0222-0012	0.18845	635,000.00	119,666	Վարելահող
50.	05-040-0222-0008	0.40427	635,000.00	256,711	Վարելահող
51.	05-040-0203-0046	0.81873	345,000.00	282,462	Խոտհարք
53.	05-040-0553-	5.35459	107,500.00	575,618	Գյուղ.այլ

	0002				
54.	05-040-0202-0066	0.65	537,500.00	349,375	Արոտ
	Ընդամենը	51.41468		22,028,280	

Արոտ	35.9726	19,335,274.00
Գյուղ.այլ	13.0338	1,401.123.00
Վարելահող	1.58964	1,009,421.00
Խոտհարք	0.81873	282,462.00



Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ

Բ. Բադալյան

18.02.2022
ՀԱՎԱՍՏԱԿԱՑ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի

«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԵՐՄՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԷՂՈՒԱՐԴ ՕՋԱՆՅԱՆԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՃԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՐԴՆԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վաճառող	Գեղարքունիքի մարզի Սևան համայնք
Գնորդ	Էդուարդ Օհանյան
Առարկան	Արդյունաբերական ջերմոցային համալիրի կառուցման համար հողատարածքի ուղղակի վաճառք գնորդին
Պայմանագրի կնքման ժամկետը	Ներդրումային ծրագրի իրականացման նպատակով համայնքը ներդրողի հետ կնքում է հողամասի օտարման և գրավի պայմանագիր (վաճառողի կողմից հողատարածքի օտարման վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում)
Պայմանագրի և հողատարածքի վաճառքի գինը	Հողատարածքը գնորդին կօտարվի կադաստրային արժեքով՝ 22.028.280 (քսաներկու միլիոն քսանութ հազար երկու հարյուր ութսուն)
Պայմանագրով հողի սեփականության իրավունքի փոխանցումը	Ներդրողի սեփականության իրավունքը հողամասի նկատմամբ ծագում է հողամասի օտարման և գրավի պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից, և հողամասն անմիջապես գրավադրվում է համայնքի մոտ՝ որպես հողամասի կադաստրային արժեքի վճարման պարտավորության կատարման ապահովման միջոց: Ընդ որում, հողամասը կազատվի սահմանափակումներից հողամասի կադաստրային արժեքն ամբողջությամբ վճարելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:
Պայմանագրի կնքման ծախսերը (հատակագծի, հասցեի տրամադրում, պայմանագրի նոտարական վավերացում և այլն)	Գնորդի հաշվին
Կողմերի պարտավորությունները	1. Վաճառողը պարտավորվում է՝ 1) գնորդին տրամադրել երրորդ անձանց իրավունքներից և փաստացի տիրապետումից ազատ հողատարածք. 2. Գնորդը պարտավորվում է՝ 1) պայմանագրի պայմաններին համապատասխան պայմանագիրը կնքելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում՝ վճարել պայմանագրի գինը 22.028.280 (քսաներկու միլիոն քսանութ հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով. 2) արդյունաբերական ջերմոցային համալիրի կառուցումը և համալիրն ամբողջությամբ շահագործման պետք է հանձնվի 5 (հինգ) տարվա ընթացքում: Սույն կետով սահմանված 5 (հինգ) տարվա ժամկետը հաշվարկվում է 2022 թվականի հուլիսի 1-ից, և կատարման ժամկետը սահմանվելու է մինչև 2027 թվականի հուլիսի 1-ը: Եթե սահմանված ժամկետում ի հայտ կգա գնորդի պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման անհնարինություն, մասնավորապես՝ գնորդը չկարողանա ապահովել մասնավոր սեփականատերերից իրացման գործընթացները՝ իրենից անկախ պատճառներով, ապա գնորդը պարտավորվում է դիմել Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ նշված

	հողամասերը հանրային գերակա շահ ճանաչելու պահանջով: Գնորդի կողմից իր պարտավորությունների չկատարումը կատարման անհնարինության դեպքում դրա ապացուցման բեռը կրում է գնորդը: Եթե 5 (հինգ) տարվա ընթացքում կառուցապատումն ամբողջությամբ չի իրականացվում, ապա սահմանվում է տուգանք՝ չկատարված ներդրումների ծավալի 1 (մեկ) տոկոսի չափով: Այն դեպքում, եթե 5 (հինգ) տարվա հաջորդող 1 (մեկ) տարվա ընթացքում ներդրումային ծրագիրը չի կատարվում ամբողջությամբ, ապա վաճառողն իրավունք է ձեռք բերում լուծել պայմանագիրը, որի արդյունքում կդադարեցվի գնորդի սեփականության իրավունքը, իսկ եթե հողամասի տարածքում գնորդի կողմից կատարված լինեն անբաժանելի բարեփոխումներ, ապա դրանք սեփականության իրավունքով անցնում են վաճառողին, որի դիմաց գնորդը չի ստանում որևէ փոխհատուցում: 3) հողամասը կարող է օգտագործվել բացառապես որոշմամբ հավանության արժանացած առնվազն 48.000.000 (քառասունութ միլիոն) եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով ներդրումային ծրագրի շրջանակներում՝ արդյունաբերական ջերմոցային համալիրի կառուցման համար: 4) իր կողմից ձեռք բերվող հողատարածքը, մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը, օտարել միայն վաճառողի համաձայնությամբ: Հողատարածքը նոր գնորդին կարող է օտարվել միայն գնորդի հետ կնքված պայմանագրերով սահմանված պարտավորությունները նոր գնորդի կողմից ստանձնելու դեպքում: 5) մեկ տարվա ընթացքում «Գրին Սոլուշնս» ՍՊԸ-ն ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի հետ կկնքի Նվիրաբերության պայմանագիր և կնվիրաբերի 4,000,000 /չորս միլիոն/ ՀՀ դրամ, որը կուղղվի համայնքում իրականացվող ծրագրերի համաֆինանսավորմանը: 6) հողերի իրացման և միավորման պրոցեսն ավարտելուց հետո պարտավորվում է դրանք ներդնել «Գրին Սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում: 7) Ծրագրի իրականացման ողջ ժամկետում յուրաքանչյուր տարվա մինչև հունվարի 30-ը ներառյալ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետին ներկայացնել նախորդ տարվա ընթացքում Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տարեկան հաշվետվություն և/կամ համապատասխան այլ տեղեկատվություն: 8) Ծրագրի իրականացման 1-ին տարում նախատեսվում է իրականացնել ծրագրով նախատեսված աշխատանքների և միջոցառումների ծավալի 10%-ը, 2-րդ տարում՝ 15%-ը, 3-րդ տարում՝ 15%-ը, 4-րդ տարում՝ 30%-ը և 5-րդ տարում՝ մնացած 30%-ը:
Կողմերի պատասխանատվությունը	Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն պատասխանատվություն են կրում պայմանագրի պայմանների խախտման համար: Այն պարագայում, երբ համաձայն N 3 հավելվածի, 5 (հինգ) տարվա ընթացքում գնորդը չի սկսում օգտագործել հողամասը նպատակային

Նշանակությամբ, ապա վաճառողն իրավունք է ձեռք բերում լուծել պայմանագիրը, որի արդյունքում կոդաբեթի գնորդի սեփականության իրավունքը: Այն դեպքում, եթե հողամասի տարածքում գնորդի կողմից կատարված լինեն անբաժանելի բարեփոխումներ, ապա դրանք սեփականության իրավունքով անցնում են վաճառողին, որի դիմաց գնորդը չի ստանում որևէ փոխհատուցում: Գնորդը պատասխանատվություն է կրում՝ 1) պայմանագրի գնի վճարման ժամկետի խախտման համար, որի դեպքում վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի նկատմամբ կհաշվարկվի տույժ՝ կետանցի օրվանից մինչև պարտավորության կատարման օրը՝ համապատասխան ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների կրկնապատիկի չափով: Վճարման ժամկետն ավելի քան 180 օր ուշացնելու դեպքում վաճառողին իրավունք է վերապահվում լուծելու պայմանագիրը: Մինչև պայմանագրի լուծման պահը գնորդի կողմից վճարված գումարները չեն վերադարձվում:

2) կառուցապատման ժամկետների խախտման համար, որի դեպքում չկառուցապատված հողատարածքի միավորի պայմանագրի գնի նկատմամբ պետք է հաշվարկվի տույժ՝ կետանցի օրվանից մինչև պարտավորության կատարման օրը՝ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների կրկնապատիկի չափով: Կառուցապատման ժամկետներն ավելի քան 180 օր ուշացնելու դեպքում վաճառողին իրավունք է վերապահվում լուծելու պայմանագիրը՝ չկառուցապատված հողատարածքի մասով: Մինչև պայմանագրի լուծման պահը գնորդի կողմից վճարված գումարները չեն վերադարձվում: Պայմանագրի այլ պայմանների խախտման համար պատասխանատվությունը կսահմանվի պայմանագրով:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ**

Բ. Բադալյան

18.02.2022
ՀԱՎԱՍՏԱԿԵ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
փետրվարի 17-ի N 195-Ն որոշման

**«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՐՄԱՏՈՒՄՆԵՐ ՀԱՄԱԼԻՐ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ԷՂՈՒՄՐԴ ՕՃԱՆՑԱՆԻ
ԵՎ «ԳՐԻՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ**

Ժամանակակից ջերմատներում բույսերի մշակությունը համարվում է գյուղատնտեսության արագ տեմպերով զարգացող, շահույթաբեր և հեռանկարային ճյուղերից մեկը: Նմանատիպ ջերմատները հնարավորություն են տալիս ստանալ բուսաբուծական արտադրանք տարվա բոլոր եղանակներին, ապահովել բարձր բերքատվություն և օգուտներ:

Աշխարհում, բուսաբուծական արտադրանքի արտադրության գործընթացում, ամեն տարի ավելանում է արդյունաբերական ջերմատների մասնաբաժինը, որում վերջին տարիներին անմասն չի մնացել նաև Հայաստանը: Ձերմատնային արդյունաբերության զարգացման և տարածման համար Հայաստանն ունի բոլոր բարենպաստ նախապայմանները՝

- բարենպաստ եղանակային պայմաններ,

- բազմաթիվ կլիմայական գոտիներ (տարվա ընթացքում ավելի քան 320 արևոտ օրեր),
- քաղցրահամ ջրային ռեսուրսների առկայություն,
- գյուղատնտեսական գործունեության համար նպաստավոր հարկային դաշտ,
- համեմատաբար էժան աշխատուժ,
- արտահանման լայն շուկաների առկայություն՝ ԵՏՄ երկրներ, Միջին Արևելք և այլն, ընդ որում ԵՏՄ երկրներ արտադրանքի արտահանումն ազատված է մաքսատուրքից, և արտահանման գործընթացն իրականացվում է ավելի պարզեցված ընթացակարգով:

Միևնույն ժամանակ ջերմատների կողմից իրականացվում են անհրաժեշտ սերտիֆիկացման գործընթացներ, ինչը հնարավորություն կտա մոտ ապագայում արտադրանքն արտահանել նաև Եվրոպա:

Հայաստանում առաջին արդյունաբերական ջերմատնային համալիրը կառուցվել է 2011 թ.-ին: Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի տարբեր մարզերում և Երևան քաղաքի տարածքում կառուցվել և շահագործման են հանձնվել մոտ 200 հա ընդհանուր տարածքով ժամանակակից ջերմատներ, որտեղ իրականացվում է հիմնականում լուլիկի, վարդի, վարունգի և ելակի արտադրություն: Հայաստանում գործող ժամանակակից ջերմատները տարեկան արտահանում են շուրջ 100 մլն ԱՄՆ դոլարի արտադրանք: Մեր երկրում արդյունաբերական ջերմատների զարգացումը հնարավորություն է տվել համայնքներում բարձրացնել բնակչության զբաղվածության մակարդակը և բարելավել սոցիալական վիճակը: Հայաստանում ժամանակակից ջերմատների շահագործման արդյունքում ստեղծվել է ավելի քան 3000 ուղղակի աշխատատեղ, ընդ որում՝ աշխատանքներում ներգրավվել են հիմնականում ջերմատների տեղակայման և հարևան համայնքների բնակիչները (որից մոտ 75 տոկոսը՝ կանայք): Ջերմատների կառուցման և շահագործման ընթացքում ստեղծվել է 1000-1500 ոչ ուղղակի աշխատատեղ՝ շինարարության, լոգիստիկայի և այլ ոլորտներում, ավելացել է գազի և էլեկտրաէներգիայի սպառումը երկրում, որի արդյունքում նաև ավելացել են պետական և համայնքային բյուջեների հարկերը:

Ներդրումային ծրագիրը նախատեսվում է իրականացնել 115.77193 հա ընդհանուր մակերես ունեցող հողամասում, որից՝

Սևան համայնքում՝ 52.98654 հա (որից 1.57186 հա ընդհանուր մակերես ունեցող հողամասերը մասնավորեցման ենթակա չեն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի պահանջների) համայնքային սեփականություն հանդիսացող, 55.68539 հա մասնավոր սեփականություն հանդիսացող.

Վարսեր համայնքում՝ 7.1 հա պետական սեփականություն հանդիսացող:

Կառուցապատումը կկազմի՝

- Ջերմոցային համալիր՝ շուրջ 45 հա

- Արդյունաբերական տնկարան՝ շուրջ 2.7 հա

- Ենթակառուցվածքային, տեխնիկական և սպասարկման տարածքներ՝ մինչև 65 հա:

Ներդրումների մոտավոր արժեքը՝ առնվազն 48 մլն եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Շինարարական աշխատանքները կատարվելու են փուլային և կավարտվեն 60 ամսվա ընթացքում:

Օտարման գործընթացն իրականացվելու է Էդուարդ Օհանյանի միջոցով, քանի որ հողերի իրացման գործընթացը բավականին ժամանակատար պրոցես է, իսկ այն իրավաբանական անձով իրականացնելը այդ պրոցեսը բազմակի անգամ կծգծգի, միևնույն ժամանակ Էդուարդ Օհանյանը, ով հանդիսանում է «Գրին Սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիրը, միևնույն ժամանակ նաև տնօրենը, հողերի իրացման և միավորման պրոցեսն ավարտելուց հետո պարտավորվում է վերոնշյալ հողերը ներդնել բացառապես «Գրին Սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում:

Նշված օտարման գործընթացում և ծրագրի գործողության ամբողջ ընթացքում «Գրին Սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը Էդուարդ Օհանյանի հետ համապարտ պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության կառավարության առջև:

Ընկերությունը Սևան համայնքի հետ կկնքի նվիրաբերության պայմանագիր և կնվիրաբերի 4,000,000 /չորս միլիոն/ ՀՀ դրամ, որը կուղղվի համայնքում իրականացվող ծրագրերի համաֆինանսավորմանը:

Ծրագրի իրականացման անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներգրավվելու են օտարերկրյա ներդրողի/ներդրողների և վարկային ռեսուրսների հաշվին:

Ծրագրի իրականացման արդյունքում Գեղարքունիքի մարզում կկառուցվի առաջին գերժամանակակից արդյունաբերական ջերմոցային համալիրը, որը կապահովի մշտական աշխատանքով 450-500 հոգու: Միջին աշխատավարձը կկազմի 180-220 հազար ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման շինարարական փուլում կստեղծվի լրացուցիչ մոտ 400 աշխատատեղ:

Ծրագրի իրականացման 1-ին տարում նախատեսվում է իրականացնել ծրագրով նախատեսված աշխատանքների և միջոցառումների ծավալի 10%-ը, 2-րդ տարում՝ 15%-ը, 3-րդ տարում՝ 15%-ը, 4-րդ տարում՝ 30%-ը և 5-րդ տարում՝ մնացած 30%-ը:

Վերջնական արդյունքում համալիրը կարտադրի շուրջ 12.000 տոննա բանջարեղենային մշակաբույսեր, որոնց մինչև 80%-ն արտահանվելու է:

վարչապետի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ

Բ. Բադալյան

18.02.2022
ՀԱՎԱՍՏԱԿԱՆ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ